



Սիւսանթո

Թաղում

Յուսահատօրէն ու պանդխտօրէն անտառը վերադարձայ
Իմ վախճանած բարեկամս համբուրելու համար,
Ու բոլոր եղնիկներուն ու կարապներուն հետ,
Որ լիճերուն ու հոգիիս տխրութիւնը կը հասկնան,
Թաղումը ըրինք բարեկամիս, ձմրան կէս գիշերի մը մէջէն...
Օ՛, իր մարմինը ո՛րչափ ծանր էր իմ՝ կեանքէն յոգնած ուսերուս համար,
Ու Մահը ո՛րչափ հեռու իմ այլաբաղձութիւնով իրեն կարկառուող տղու
աչքերէս...
Աստուածային ու անբասիր կարապները թաղումը տօնեցին,
Ու ես եղնիկներուն հետ տաժանագինօրէն գերեզմանը փորեցի,
Անտառին բոլոր ծառերը յուղարկաւորներ եղան...
Ու մահուան հովը՝ անոնց անձանօք ու երկաթեայ բուրվառը...
Ու մօտաւոր ու հեռաւոր քաղաքներուն բոլոր մահազանգերը նուիրական,
Երկարօրէն, մահազուժօրէն ու բարեպաշտօրէն,
Արեւէն այրի ու ամայի գիշերին մէջ ըսին թէ՛
Բարեկամ մը անտառներու եղնիկներուն ու լիճերու կարապներուն
Ու երկայն ու ահաւոր ծառերուն ու հովերուն հետ,
Երկիւղածութիւնով իր բարեկամը կը թաղէ:
Գիտէք թէ հեռաւոր ու մօտաւոր քաղաքները բոլոր
Օրերուն ու մարդերուն ոճիրներէն քանդուեցան,
Կարապներն ու խարտեաշ եղնիկները հովերուն մէջ խեղդուեցան...
Չանգակներ հին եկեղեցիներու փառքերուն հետ լոնցին,
Բայց իմ հոգիս, բայց իմ սգաւոր հոգիս,

Այս բոլորին թաղումներէն ու մահացումներէն վիրաւոր՝
Անտառներուն սարսափին մէջը քանտարկուած մնաց...